Հայտարարություն

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025թվականի հուլիսի 28-ի որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՌՀԱԲԿ ԳՀԱՊՁԲ 25/28

<<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն >> ՓԲԸ կարիքների համար լիզինգով էնդոսկոպիկ վիդեո համակարգի հավաքածուի ձեռքբերման համար հայտարարված ՌՀԱԲԿ ԳՀԱՊՁԲ 25/28 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է սույն ծածկագրով հրավերի 2025 թվականի հուլիսի 26-ին ժամը 23.20- ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգով ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2025թվականի հուլիսի 28-ին տրամադրված պարզաբանումը.

Հարցադրում .

Արդյո՞ք հրավերի տեխնիկական բնութագիրը խտրական չէ և չի հակասում է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասին

Պարզաբանում.

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Ձեր կողմից նշված անվանումներով գործիքները `

1. Նախատեսված են որպես էնդոսկոպիկ վիրաբուժական միավորի պարտադիր մասեր,
2. Գործիքները անհրաժեշտ են սարքավորման լիարժեք և նպատակային օգտագործման համար:

Հավաքածուի ձեռքբերումը չենք դիտարկում որպես խմբավորում, քանի որ առանձին չափաբաժիններով ձեռքբերելու դեպքում՝

1. Գործիքների ձեռքբերման գործընթացը որևէ պարագայում չկայանալու դեպքում արդյունավետ չի լինի էնդոսկոպիկ վիրաբուժական միավորի ձեռքբերումը,
2. էնդոսկոպիկ վիրաբուժական միավորի ձեռքբերման գործընթացը որևէ պարագայում չկայանալու դեպքում անիմաստ կլինի գործիքների ձեռքբերումը:
3. Սարքավորման առանձին առանձին մասերը առանձին առանձին ձեռքբերելու դեպքում հնարավոր է իրար հետ չաշխատեն, ինչը պատվիրատուի կարիքը չի բավարարի, ուստի պետք է դրանք լինեն մեկ չափաբաժին, որպեսզի մատակարարը լինի մեկը, և լինի ամբողջական համակարգ, որը կաշխատի առանց խնդիրների:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 25 հոդվածի 2-րդ կետի պահանջներով ընկերությունը նպատակահարմար է գտել ձեռքբերել էնդոսկոպիկ վիդեո համակարգի հավաքածու (կան նախադեպեր նմանատիպ մրցույթների իրականացման մասին, օր ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/20):

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարելի է դիմել ՌՀԱԲԿ ԳՀԱՊՁԲ 25/28 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Անահիտ Արսենյանին

Հեռախոս 0222 2 15 35 ՌՀԱԲԿ ԳՀԱՊՁԲ 25/28 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողով